Public Disclosure Authorized
Public Disclosure Authorized
Public Disclosure Authorized

# ՀԱՅԱՍՏԱՆ.
## ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԿՐՃԱՏՈՒՄ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ

WORLD BANK GROUP

Հարավային Կովկասի
աղքատության հարցերի թիմ
Համաշխարհային բանկի
Աղքատության և հավասարության
վարչություն

4 հոկտեմբերի, 2016 թ.

# Խոսք երախտագիտության

Աղքատության գնահատումն իրականացվել է 2016 թվականի ֆինանսական տարվա՝ Հարավային Կովկասի աղքատության գնահատման ծրագրային տեխնիկական աջակցության շրջանակներում (P156449):

Հայաստանի աղքատության գնահատումն իրականացնող թիմի անդամներն են Նիսթա Սիննհան (առաջադրանքն իրականացնող թիմի ղեկավար), Մորից Մեյերը, Փոլ Անդրես Կորալ Ռոդասը, Քադիմ Էրվին Խանը և Սասուն Ծիրունյանը: Վերլուծական աշխատանքին նպաստել են քննարկումները Գոհար Գյուլումյանի, Լորա Բեյլիի, Ալեքսան Հովհաննիսյանի հետ, ինչպես նաև Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակի թիմից ստացած մանրամասն կարծիքները: Արփինե Ազարյանը և Արմադա Կարկանին աջակցել են կազմակերպչական և ընթացիկ հարցերում: Ձեկույցը կազմվել է Մերսի Միյանգ Թեմբոնի, Լորա Բեյլիի, Կառոլինա Սանչեզ-Պարամոյի և Ռաշմի Շանքարի ուղղորդմամբ: Անկախ փորձագիտական կարծիք են տրամադրել Կառոլինա Դիազ-Բոնիլլան և Կոնգյան Թանը:

Թիմը շնորհակալություն է հայտնում Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանը (ՀՀ ԱՎԾ) և 2016 թվականի մայիսին Երևանում կայացած խորհրդակցական աշխատաժողովի մասնակիցներին ստացված բոլոր դիտողությունների և կարծիքների համար:

# Ամփոփ տեղեկանք. աղքատության կրճատման և ընդհանուր բարեկեցության պատկերը

- **Տնտեսական աճի շնորհիվ ավելանում են եկամտային բոլոր քվինտիլների սպառողական ծախսերը և նվազում է աղքատությունը:** Ողջ բնակչության համեմատ՝ ամենացածր եկամուտ ունեցող 40 տոկոսի համար սպառողական ծախսերի աճն ավելի փոքր է:

- **2010-2014 թթ. ընթացքում աղքատությունը Հայաստանում նվազել է:** Միջազգային համեմատության արդյունքներով՝ Հայաստանը դեռևս աղքատության ամենաբարձր մակարդակն ունեցող երկրներից է Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում, իսկ 2009 թ. համաշխարհային տնտեսական ճգնաժամից հետո երկիրը շատ փոքր առաջընթաց է ունեցել:

- **Չնայած բոլոր տնային տնտեսությունների սպառողական ծախսերի դրական աճին՝** (i) Երևանի, մյուս քաղաքների և գյուղերի միջև դեռևս կան տարածաշրջանային մեծ անհամաչափություններ, (ii) դեռևս առկա է աղքատության նկատմամբ խոցելիություն, իսկ (iii) կյանքի պայմանների ոչ նյութական չափանիշներն ընդգծում են խզումը զարգացման մասով:

# Ամփոփ տեղեկանք. եկամուտների աճը և աղքատության կրճատումը պայմանավորող գործոնները

- **Եկամտի աճ և աղքատության կրճատում:** Աղքատության ցուցանիշի անկմանը նպաստել են՝ (i) զբաղվածության և աշխատավարձերի ավելի բարձր մակարդակը, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրանքի վաճառքի ծավալների աճը, (ii) դրամական փոխանցումները և (iii) սոցիալական ոլորտում կատարվող ծախսերը, օրինակ՝ կենսաթոշակները:

- **Աշխատաշուկաներ:** Ծառայությունների և արտադրական գործունեության աճը հանգեցրել է զբաղվածության լրացուցիչ հնարավորությունների և ավելի բարձր աշխատավարձերի: Գյուղմթերքների վաճառքի ծավալների աճը նպաստավոր է եղել գյուղական բնակավայրերի համար: Աղքատ ընտանիքների անդամները՝ (i) ավելի հաճախ են գործազուրկ, (ii) ավելի քիչ ժամեր են աշխատում, (iii) հաճախ ժամանակավոր կամ սեզոնային աշխատողներ են և (iv) ավելի քիչ են պաշտպանված, ինչը պայմանավորված է այլ տեսակի պայմանագրերով: Այլ քաղաքային բնակավայրերում ստեղծված չեն զբաղվածության բավարար հնարավորություններ մասնավոր հատվածում (ոչ գյուղատնտեսական ոլորտում) գյուղատնտեսական ոլորտում զբաղվածության կրճատվող ծավալները կլանելու համար:

- **Միգրացիա:** Միջազգային միգրացիան աշխատանքի հնարավորություններ է ստեղծում ծովային սահմաններ չունեցող երկրի համար: Միաժամանակ դրամական փոխանցումներն էական տատանումների են ենթարկվում՝ պայմանավորված տնտեսական միջավայրում տեղի ունեցող փոփոխություններով:

- **Հարկաբյուջետային մեխանիզմներ:** Ընդհանուր առմամբ, հարկերն ու պետության կողմից կատարվող ծախսերը կրճատում են աղքատությունը և անհավասարությունը: Կենսաթոշակները եկամտի կարևոր աղբյուր են, իսկ ընտանեկան նպաստի ծրագրով (ԸՆԾ) կատարվող փոխանցումները նվազեցնում են աղքատության ինտենսիվությունը: Այդուհանդերձ ԸՆԾ-ի ներգործությունը փոքր է, քանի որ բյուջեն սահմանափակ է :

# Ամփոփ տեղեկանք. քաղաքականության օրակարգը







**Քաղաքականության օրակարգը:** Աղքատության և ընդհանուր բարեկեցության պատկերը հուշում է, որ քաղաքականության օրակարգի առանցքում պետք է լինի տնտեսական աճի ներառականությունը.

**(i) աջակցություն տնտեսական աճին,**

**(ii) նպատակային ներդրումներ և**

**(iii) աղքատների ու խոցելի խմբերի պաշտպանություն:**

# Հայաստանի օրակարգը. աղքատության կրճատում և ընդհանուր բարեկեցություն

Համաշխարհային բանկի զույգ նպատակները Հայաստանում. միջազգային տեսանկյուն

Վերջին միտումները. տնտեսական աճ, աղքատության կրճատում և ընդհանուր բարեկեցություն

Աղքատության պատկերը. ովքեր են աղքատները, ինչպես են նրանք զգում աղքատությունը և որտեղ են ապրում

Եկամուտների աճի և աղքատության կրճատման աղբյուրները. եկամուտների կառուցվածքը և փոփոխությունը ժամանակի ընթացքում

Համախմբված ցուցանիշների հիմքում ընկած է երեք փաստ եկամուտների աճի ու մարտահրավերների վրա ներգործող պայմանների վերաբերյալ

Քաղաքականության օրակարգը. աջակցություն, ներդրումներ և պաշտպանություն



WORLD BANK GROUP




ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿ ԽՄԲԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ
ՎԵՐՋ ՏԱԼ ԾԱՅՐԱՀԵՂ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԶԱՐԿ ՏԱԼ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՐԳԱՎԱՃՄԱՆԸ

# Համաշխարհային բանկի զույգ նպատակները Հայաստանում

## Միջազգային մոտեցում

Տնտեսական աճը նպաստել է Հայաստանի բոլոր տնային տնտեսությունների սպառման ծավալների աճին և աղքատության կրճատմանը:

Միջազգային համեմատությունը ցույց է տալիս, որ աղքատության և ընդհանուր բարեկեցության մասով Հայաստանը վատ արդյունքներ է գրանցել:

WORLD BANK GROUP

**Աղքատության կրճատում: 2014 թ. բնակչության 26.3 տոկոսն ապրում էր 2.5 ԱՄՆ դոլարի գնողունակությանը համարժեք միջազգային աղքատության գծից ներքև: 2010 թ. համեմատ՝ աղքատությունը կրճատվել է, սակայն աղքատ տնային տնտեսությունների տեսակարար կշիռը դեռևս ավելի մեծ է, քան մինչև համաշխարհային տնտեսական ճգնաժամն էր, որը երկիրը պատուհասեց 2009 թ:**




Աղքատության միտումը՝ 2.5 ԱՄՆ դոլարի գնողունակության համարժեք միջազգային աղքատության գծի կիրառմամբ և աղքատության ազգային ցուցանիշը (դեղին գիծ): Հայաստանի ՀՆԱ-ի աճը (գծային դիագրամ): *Ծանոթություն* 1. Համաշխարհային բանկի աշխատակիցների հաշվարկը ՏՏԿԱՀ-ի տվյալներից վերցված սպառման ագրեգացված ցուցանիշի կիրառմամբ՝ դրանք համապատասխանեցնելով միջազգային համեմատության համար: *Ծանոթություն* 2. Սպառման ազգային ագրեգատ (2009 թ. ընդունված մեթոդաբանության կիրառմամբ): *Աղբյուրը*՝ Համաշխարհային բանկի՝ սպառման ծավալների ներդաշնակեցված ցուցանիշների տվյալների բազա (ECAPOV, 2016 թ. մարտի 15-ի դրությամբ):



WORLD BANK GROUP

Միջազգային համեմատությունը ցույց է տալիս, որ Հայաստանն աղքատության ամենաբարձր ցուցանիշ ունեցող երկրներից է Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում: Մեկ շնչի հաշվով միևնույն ՀՆԱ-ի ցուցանիշն ունեցող այլ երկրներում գրանցվել է աղքատության ավելի ցածր մակարդակ. տնտեսական աճի և կյանքի պայմանների բաշխվածության բնույթը տարբերվում է տարածաշրջանի այլ երկրներից:







Աղքատության մակարդակը. 2.5 ԱՄՆ դոլարի գնողունակության համարժեք միջազգային աղքատության գիծ (ձախից) և հարաբերությունը մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի և «2.5 ԱՄՆ դոլարի գնողունակություն» միջազգային աղքատության ցուցանիշի միջև (աջից): Ծանոթություն. Համաշխարհային բանկի աշխատակիցների հաշվարկը ՏՏԿԱՀ-ի տվյալներից վերցված սպառման ագրեգատի կիրառմամբ՝ դրանք համապատասխանեցնելով միջազգային համեմատության համար: *Աղբյուրը*՝ Համաշխարհային բանկի սպառման ծավալների ներդաշնակեցված ցանիշների տվյալների բազա (ECAPOV՝ 2016 թ. մարտի 15-ի դրությամբ):



WORLD BANK GROUP

**Ընդհանուր բարեկեցություն: 2009-2014 թթ. տնտեսական աճը նպաստել է ամենացածր՝ 40 տոկոսը կազմող տնային տնտեսությունների սպառողական ծախսերի աճին: Աճի բաշխվածությունն ի նպաստ աղքատ խավի չի եղել. համեմատաբար աղքատ տնային տնտեսություններն ավելի շատ բարիք են կորցրել ճգնաժամի ընթացքում և ավելի դանդաղ աճ են ունեցել դրանից հետո:**

## Ընդհանուր բարեկեցություն. մեկ շնչի հաշվով միջին սպառողական ծախսի աճի ցուցանիշը




Ընդհանուր բարեկեցության միտումները. մեկ շնչի հաշվով միջին սպառողական ծախսի աճի ցուցանիշը (%): Ծանոթություն. Համաշխարհային բանկի աշխատակիցների հաշվարկը ՏՏԿԱՀ-ի տվյալներից վերցված սպառման ագրեգատի կիրառմամբ՝ դրանք համապատասխանեցնելով միջազգային համեմատության համար: *Աղբյուրը*՝ Համաշխարհային բանկի՝ սպառման ծավալների ներդաշնակեցված ցուցանիշների տվյալների բազա (ECAPOV, 2016 թ. մարտի 15-ի դրությամբ):

**Միջազգային համեմատության արդյունքներով՝ 2009-2014 թթ. Հայաստանը (1) պատկանել է այն երկրների շարքին, որտեղ ամենացածր 40 տոկոսի և ողջ բնակչության սպառողական ծախսերի աճը դրական է եղել, սակայն (2) ամենացածր 40 տոկոսի պարագայում այդ ծավալն ավելի դանդաղ է աճել, քան ողջ բնակչության դեպքում։**

Ընդհանուր բարեկեցության պատկերը Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում, 2009 – 2014 թթ.




Ընդհանուր բարեկեցության վիճակը Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում՝ ամենացածր եկամուտ ունեցող 40 տոկոսի և ընդհանուր բնակչության սպառման ծավալների աճի ցուցանիշի կիրառմամբ (2008-2013 թթ. շրջակում)։ Ծանոթություն. Համաշխարհային բանկի աշխատակիցների հաշվարկը ՏՏԿԱՀ-ի տվյալներից վերցված սպառման ագրեգատի կիրառմամբ՝ դրանք համապատասխանեցնելով միջազգային համեմատության համար։ *Աղբյուրը*՝ Համաշխարհային բանկի՝ սպառման ծավալների ներդաշնակեցված ցուցանիշների տվյալների բազա (ECAPOV, 2016 թ. մարտի 15-ի դրությամբ)։



WORLD BANK GROUP

# Վերջին միտումները

## Տնտեսական աճ, աղքատության կրճատում և ընդհանուր բարեկեցություն

Տնտեսության վերականգնման շնորհիվ բարձրացել է Հայաստանի բոլոր տնային տնտեսությունների կենսամակարդակը և կրճատվել է աղքատությունը:

Սպառման ծավալների աճը դրսևորում է տատանումներ և անհամաչափություններ եկամտային բոլոր քվինտիլներում:

Աղքատության դինամիկան վկայում է մեծ թվով անապահով ընտանիքների մասին:

WORLD BANK GROUP

**2010-2014 թթ. աղքատության կրճատման շրջանը տեղ է գտել դանդաղ տնտեսական աճի պայմաններում. դրան հաջորդել է համաշխարհային տնտեսական ճգնաժամը, որը Հայաստան հասավ 2009-ին, այժմ երկրում աճի տեմպը շատ ավելի դանդաղ է, քան նախաճգնաժամային շրջանում:**




Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի աճի ցուցանիշը: Ծանոթություն. աճի ցուցանիշի հիմքում ընկած են իրական ՀՆԱ-ում տեղ գտած տարեկան փոփոխությունները (ընթացիկ շուկայական գներով): Աղբյուրը՝ Համաշխարհային զարգացման ցուցանիշներ՝ հրապարակված Համաշխարհային բանկի կողմից: Համաշխարհային բանկի հրապարակած՝ կանխատեսումը 2015-2017 թթ. վերաբերյալ (2016 թ. մարտ):

Հայաստանում աղքատությունը կրճատվել է՝ 2010 թ. 35.8 տոկոս ցուցանիշից 2014 թ. հասնելով 30.0 տոկոսի (աղքատության ազգային գիծ): Միևնույն ժամանակահատվածում աղքատ տնային տնտեսությունները սպառման ծավալների դրական աճ են գրանցել և մոտեցել են աղքատության գծին: Սակայն աղքատության կրճատման այս տեմպն ավելի դանդաղ է նախաճգնաժամային տարիների տեմպի համեմատ (2004-2007 թթ.):




Հայաստանի աղքատության ցուցանիշը 2004-2014 թթ.: Ծանոթություն. Սպառման ազգային ագրեգատ (2009-ին ընդունված մեթոդաբանության կիրառմամբ): Աղբյուրը՝ Սոցիալական պատկերը և աղքատությունը, 2015 թ:

Վերջին աճի ժամանակաշրջանը դրական է ազդել եկամտային բոլոր քվինտիլների վրա և ապահովել է նրանց սպառման մակարդակների աճ: Բայց և այնպես աղքատության կրճատումը կարող էր և ավելին լինել, եթե աղքատ տնային տնտեսությունների աճի տեմպը հավասար լիներ համեմատաբար հարուստ տնային տնտեսությունների աճի տեմպին:







Աճի կոր (ձախից) և Դատտի ու Ռավալիոնի մեթոդաբանությունը Հայաստանի համար (աջից): Ծանոթություն. Սպառման ազգային ագրեգատ (2009 թվականին ընդունված մեթոդաբանության կիրառմամբ): Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի աշխատակիցների հաշվարկները 2010-2014 թթ. Հայաստանի ՏՏԿԱՀ-ի հիման վրա:

Ավելին, սպառման ծավալների աճի մակարդակը կենսամակարդակի տարբեր դեցիլներում ցույց է տալիս (1) մեծ տատանումներ ժամանակի ընթացքում և (2) նշանակալի անհամաչափություն եկամտային տարբեր քվինտիլների միջև :




Սպառման ծավալների աճը կենսամակարդակի բաշխվածության տարբեր դեցիլներում (ամենաաղքատներից մինչև ամենահարուստներ)։ Ծանոթություն. Սպառման ազգային ագրեգատ (2009-ին ընդունված մեթոդաբանության կիրառմամբ), տարեցտարի գրանցված փոփոխությունը 2008-2014 թթ.։ Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի աշխատակիցների հաշվարկները 2008-2014 թթ. Հայաստանի ՏՏԿԱՀ-ի հիման վրա։

2014 թվականին Ջինիի գործակցի 0.277 արժեքը մատնացույց է անում անհավասարության չափավորից ցածր մակարդակներ. (1) անհավասարությունը համեստ աճ է ունեցել 2008-2014 թթ. ընթացքում, (2) անհավասարության մակարդակներն ու դրանց փոփոխությունները, ըստ էության, ամենամեծն են Երևանում, (3) անհավասարությունը՝ հիմնականում տարածաշրջանների միջև. տարածաշրջանների միջև շատ մեծ անհավասարություն չկա:

Աղյուսակ X. Սպառման անհավասարության ցուցանիշը Հայաստանում

| Տարի | Ջինիի գործակից | Թեյլի միջին (α=-1) |
|---|---|---|
| 2008 | 0.242 | 0.097 |
| 2009 | 0.257 | 0.111 |
| 2010 | 0.265 | 0.115 |
| 2011 | 0.266 | 0.117 |
| 2012 | 0.269 | 0.123 |
| 2013 | 0.271 | 0.124 |
| 2014 | 0.277 | 0.129 |

Աղյուսակ X. Սպառման անհավասարության ցուցանիշը Հայաստանում, Ջինիի գործակից

| Տարի | Երևան | Այլ քաղաքներ | Գյուղեր |
|---|---|---|---|
| 2008 | 0.247 | 0.246 | 0.222 |
| 2009 | 0.269 | 0.258 | 0.230 |
| 2010 | 0.297 | 0.241 | 0.234 |
| 2011 | 0.305 | 0.248 | 0.207 |
| 2012 | 0.279 | 0.271 | 0.248 |
| 2013 | 0.289 | 0.286 | 0.231 |
| 2014 | 0.341 | 0.244 | 0.215 |

Անհավասարությունը՝ երկրի մասշտաբով և ըստ բնակավայրերի: Ծանոթություն. Սպառման ազգային ագրեգատ (2009-ին ընդունված մեթոդաբանության կիրառմամբ): Ջինիի և Թեյլի գործակիցները 0-ից 1-ի տիրույթում են, իսկ Ջինի գործակցի 0 արժեքը (Թեյլի գործակցի 0 արժեքը) վկայում է բացարձակ անհավասարության մասին: Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի աշխատակիցների հաշվարկները 2008-2014 թթ. Հայաստանի ՏՏԿԱՀ-ի հիման վրա:

**Դեռևս առկա է աղքատության նկատմամբ խոցելիություն, որն արտացոլում է սպեցիֆիկ և համընդհանուր ցնցումները: 2010-2014 թթ. աղքատ էր 10.6 տոկոսը՝ այս երկու ժամանակահատվածներում, և ընդամենը 53.8 տոկոսի վրա չէր ազդել աղքատությունը՝ ինչպես այն սահմանված է աղքատության վերին գծում:**

## Պայմանական անցում աղքատից ոչ աղքատ կարգավիճակի 2010-2014 թթ. ժամանակահատվածում




Պայմանական անցում աղքատից ոչ աղքատ կարգավիճակի 2010-2014 թթ. ժամանակահատվածում: Ծանոթություն. տնտեսական շարժունության վիճակը գնահատվել է միայն այն տնային տնտեսությունների հաշվառմամբ, որտեղ ընտանիքի գլխավորը 25-55 տարիքային խմբում է: Սպառման ազգային ագրեգատ (2009-ին ընդունված մեթոդաբանության կիրառմամբ): Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի աշխատակիցների հաշվարկները 2008-2014 թթ. Հայաստանի ՏՏԿԱՀ-ի հիման վրա:



WORLD BANK GROUP

# Աղքատության պատկերը
## Ովքե՞ր են աղքատները, ինչպե՞ս են նրանք զգում աղքատությունը և որտեղ են ապրում

Աղքատ տնային տնտեսությունները ժողովրդագրական և նյութական ապահովվածության առումով տարբերվում են ոչ աղքատ տնային տնտեսություններից:

Աղքատ տնային տնտեսությունների կացարանային պայմաններն ավելի վատ են, բացակայում է հանրային ծառայություններից օգտվելու հնարավորությունը, նաև առկա են տարբերություններ՝ ըստ տարածաշրջանների:

Աղքատ տնային տնտեսությունները կենտրոնացած են Երևանում և Երևանի հարակից տարածքներում. տարածաշրջանային աղքատության ցուցանիշներն ամենից բարձր են մյուս քաղաքային բնակավայրերում:

WORLD BANK GROUP

**Ովքե՞ր են աղքատները. ժողովրդագրական տարբերություններ և խզումներ եկամտային տարբեր քվինտիլների միջև նպատակային ֆինանսավորման, օրինակ՝ կրթության և առողջապահության մասով: Աղքատ տնային տնտեսությունների կախվածության գործակիցն ավելի բարձր է, և ընտանիքի գլխավորը հաճախ կին է: Տարաբնույթ զրկվածություն՝ կապված հիմնական կրթության և առողջական վիճակի հետ:**



















Զրկվածություն՝ կապված Հայաստանում առկա տարաբնույթ աղքատության տարբեր տիրույթների հետ: Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի աշխատակիցների հաշվարկները 2014 թ. Հայաստանի ՏՏԿԱՀ-ի հիման վրա:



WORLD BANK GROUP

**Ինչպե՞ս են նրանք զգում աղքատությունը: Կյանքի պայմանների ոչ նյութական չափանիշներն ընդգծում են զարգացման մասով առկա խզվածքը, որն առկա է ժամանակի ընթացքում: Աղքատ տնային տնտեսությունների մոտ արձանագրվել են ավելի վատ կացարանային պայմաններ և հանրային ծառայություններից օգտվելու անբավարար հնարավորություններ. եկամտային հինգ քվինտիլների և բնակավայրերի միջև կան սիստեմատիկ տարբերություններ**




Զրկվածություն՝ կապված եկամտային տարբեր քվինտիլների բնակարանային ապահովվածության և ենթակառուցվածքների հետ 2010-2014 թթ. (վերինը) և ըստ բնակության վայրի (ներքևինը): Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի աշխատակիցների հաշվարկները 2010 և 2014 թթ. Հայաստանի ՏՏԿԱՀ-ի հիման վրա:

# Որտե՞ղ են նրանք ապրում. աղքատության մակարդակն ամենից բարձր է այլ քաղաքային բնակավայրերում և ամենից ցածր՝ Երևանում: Հայաստանի մարզերի միջև տարածքային մեծ անհամաչափություններ կան:







Աղքատ բնակչության թվաքանակը. տարբերությունները Երևանի, այլ քաղաքային բնակավայրերի և գյուղական բնակավայրերի միջև (ձախից) և տարբերությունները՝ յուրաքանչյուր մարզում (աջից): Ծանոթություն. Սպառման ազգային ագրեգատ (2009-ին ընդունված մեթոդաբանության կիրառմամբ): Աղբյուրը՝ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2015 թ.:

**Բնակչության կենտրոնացումը մայրաքաղաքում և մայրաքաղաքին հարող տարածքներում ազդում է աղքատ տնային տնտեսությունների մարզային բաշխվածության վրա. աղքատների 41 տոկոսն ապրում է Երևանում կամ Կոտայքում: Երևանից դուրս՝ աղքատ ընտանիքների թիվը մեծ է երկրի մյուս քաղաքային բնակավայրերում:**







Աղքատ բնակչության բաշխվածությունը մարզերում (ձախից) և աղքատ ընտանիքների թվաքանակը՝ ըստ վարչական շրջանների (աջից): Ծանոթություն. Սպառման ազգային ագրեգատ (2009-ին ընդունված մեթոդաբանության կիրառմամբ): Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի աշխատակիցների հաշվարկները 2014 և 2011 թթ. Հայաստանի ՏՏԿԱՀ-ի հիման վրա (աղքատության քարտեզ):

**Աղքատների շրջանում առկա է հետևյալ միտումը. (1) ապրում են մեծ տնային տնտեսություններով՝ ընտանիքի մեծ թվով անդամներով, (2) բնակվում են երկրի քաղաքային բնակավայրերում, (3) ունեն ավելի ցածր կրթություն, (4) ցուցաղրում են զբաղվածության ավելի ցածր մակարդակ, և (5) քիչ հավանական է, որ ստանան (կարողանան գրավել) միջազգային տրանսֆերտներ:**




Տնային տնտեսություններին բնորոշ հատկանիշներ, որոնք մեծացնում կամ փոքրացնում են աղքատ լինելու հավանականությունը: Ծանոթություն. գծապատկերում ցուցադրված են սահմանային ազդեցությունները՝ հաշվարկված միավոր հավանականության մոդելով, որտեղ կախյալ փոփոխականը ընտանիքի աղքատ լինելու հանգամանքն է: Արդյունքները ստացվել են 2010-2014 թթ. ընթացքում կատարված կրկնվող ներկայացուցչական ընտրանքից:

# Եկամտի աճի աղբյուրները և աղքատության կրճատումը

## Եկամտի կառուցվածքը և փոփոխությունը ժամանակի ընթացքում

Աշխատաշուկաներից և կենսաթոշակներից ստացվող եկամուտները կազմում են աղքատ և ոչ աղքատ տնային տնտեսությունների եկամուտների ամենամեծ մասը:

Աղքատ և ոչ աղքատ տնային տնտեսությունների եկամուտների կառուցվածքը տարբեր է. աղքատների պարագայում աշխատանքային եկամտի մասն ավելի փոքր է:

Աշխատաշուկաները, գյուղմթերքի վաճառքի ծավալները, դրամական փոխանցումները և կենսաթոշակները նպաստել են եկամուտների աճին և աղքատության կրճատմանը:

WORLD BANK GROUP

**Ե՛վ աղքատ, և՛ ոչ աղքատ տնային տնտեսությունները 2010-2014 թթ. գրանցել են եկամուտների աճ: Աղքատ և ոչ աղքատ տնային տնտեսությունների եկամուտների կառուցվածքների միջև առկա է համակարգային տարբերություն. աղքատների մոտ՝ (1) աշխատանքային եկամտի ու (2) տրանսֆերտների մակարդակն ու տեսակարար կշիռն ավելի փոքր են, նրանք ավելի շատ են կախված (3) կենսաթոշակներից ստացվող եկամուտներից և (4) պետական տրանսֆերտներից:**




Եկամուտները՝ տարբեր եկամտային աղբյուրներից (ձախակողմյան սանդղակը՝ 2014 թ. հաստատուն գներով, ՀՀ դրամով, մեկ շնչի հաշվով), պիտակները ցույց են տալիս հարաբերական կազմը: Ծանոթություն. Սպառման ազգային ագրեգատ (2009-ին ընդունված մեթոդաբանության կիրառմամբ): Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի աշխատակիցների հաշվարկները 2010 և 2014 թթ. Հայաստանի ՏՏԿԱՀ-ի հիման վրա:

Եկամտի կառուցվածքի տարածաշրջանային պատկերն ընդգծում է աշխատանքից ստացվող վաստակի և կենսաթոշակների դոմինանտ դերը. (1) գյուղական բնակավայրերում՝ նաև գյուղմթերքի վաճառքից և գյուղատնտեսական աշխատանքի շուկայում ստացած վաստակից, (2) այլ քաղաքային բնակավայրերում՝ դրամական փոխանցումներից և (3) Երևանում՝ մասնավոր տրանսֆերտներից (ներքին միգրացիա):




Եկամուտները տարբեր եկամտային աղբյուրներից (ձախակողմյան սանդղակը՝ 2014 թ. հաստատուն գներով, ՀՀ դրամով, մեկ շնչի հաշվով), պիտակները ցույց են տալիս հարաբերական կազմը: Ծանոթություն. սպառման ազգային ագրեգացված ցուցանիշ (2009-ին ընդունված մեթոդաբանության կիրառմամբ): Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի աշխատակիցների հաշվարկները 2010 և 2014 թթ. Հայաստանի ՏՏԿԱՀ-ի հիման վրա:

Եկամուտների աճն ու նվազումը 2010-2014 թթ. ժամանակահատվածում՝ պայմանավորված. (1) զբաղվածության և աշխատավարձերի ավելի բարձր մակարդակով, (2) գյուղատնտեսական արտադրանքի աճող ծավալներով, ինչպես նաև գյուղական բնակավայրերում աշխատանքի առկայությամբ և (3) լրացուցիչ դրամական փոխանցումներով ու (4) մասնավոր տրանսֆերտներով, նաև՝ (5) կենսաթոշակներով, որոնք օգնել են տնային տնտեսություններին խուսափելու աղքատությունից:

## Աղքատության կրճատումը պայմանավորող գործոնները 2010-2014 թվականներին




Աղքատության կրճատումը պայմանավորող գործոնների ազդեցությունը աղքատության մակարդակի փոփոխության վրա 2010-2014 թթ.: Ծանոթություն. հաշվարկված բացասական գործակիցները նկարագրում են, թե քանի տոկոսային կետով են համապատասխան գործոնները նպաստել աղքատության կրճատմանը (և հակառակը): Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի աշխատակիցների հաշվարկները 2010 և 2014 թթ. Հայաստանի ՏՏԿԱՀ-ի հիման վրա:

# ԱԳՐԵԳԱՑՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԻՄՔՈՒՄ

## Երեք փաստ եկամուտների աճը պայմանավորող գործոնների և մարտահրավերների վերաբերյալ

WORLD BANK GROUP

# Հուշաթերթիկ երեք փաստերի մասին

**Փաստ 1**

Կառուցվածքային տրանսֆորմացիա և աշխատաշուկաներ

- Մասնավոր հատվածի զարգացման շնորհիվ բոլոր տնային տնտեսությունների եկամուտներն ավելացել են:
- Կառուցվածքային տրանսֆորմացիայի հետևանքով ինչպե՞ս կփոխվի տնտեսությունը:

**Փաստ 2**

Միգրացիա

- Ներքին և արտաքին միգրացիայի շնորհիվ ընդլայնվել են ներքին աշխատաշուկաները:
- Ինչպե՞ս օգտվել հնարավորություն-ներից և մեղմացնել մարտահրավերները:

**Փաստ 3**

Հարկաբյուջետային և սոցիալական քաղաքականություն

- Սոցիալական ոլորտում կատարվող ծախսերը պաշտպանել են աղքատ և խոցելի տնային տնտեսություններին:

# Փաստ 1
# Կառուցվածքային տրանսֆորմացիա և աշխատաշուկաներ

## Մասնավոր հատվածի զարգացման շնորհիվ բոլոր տնային տնտեսությունների եկամուտներն ավելացել են:

- Ծառայությունների և արտադրական ոլորտների զարգացումը բերել է զբաղվածության նոր հնարավորություններ և ավելի բարձր աշխատավարձեր:
- Գյուղմթերքների վաճառքի աճող ծավալներ, բարձր արդյունավետության ծառայությունների առկայություն Երևանում և աշխատատեղերի ստեղծման սահմանափակ հնարավորություններ այլ քաղաքային բնակավայրերում:
- Աշխատաշուկայի ապահոված վերջնարդյունքներն աղքատ տնային տնտեսությունների համար. աշխատանքի ցածր որակ և աշխատուժի ցածր արտադրողականություն:

WORLD BANK GROUP

**_Կառուցվածքային տրանսֆորմացիա._ ծառայությունների և արտադրական ոլորտների զարգացումը (չհաշված շինարարության ոլորտը) բերել է զբաղվածության նոր հնարավորություններ և ավելի բարձր աշխատավարձեր: Վերաբաշխում տնտեսության տարբեր ճյուղերի միջև:**










ՀՆԱ-ի կառուցվածքը (2014 թ. հաստատուն գներով, միլիոն ՀՀ դրամ)՝ ըստ ոլորտների (ձախից), ընդհանուր զբաղվածությունը՝ ըստ ոլորտների (մեջտեղում) և ամսական աշխատավարձերը (2014 թ. հաստատուն գներով, ՀՀ դրամ)՝ ըստ ոլորտների (աջից): Ծանոթություն. ոլորտը՝ ըստ NACE 2 դասակարգման: Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ (2016 թ. մարտի 15-ի դրությամբ):

## ՀՆԱ-ի աճի պատկերը վկայում է տնտեսության ճյուղերի ապահոված տարբեր արդյունքների մասին: Գյուղատնտեսության ճյուղի ընդլայնում և արդյունաբերության ու ծառայությունների ոլորտների զարգացում. շինարարության ոլորտում ծավալների նշանակալի անկում:




ՀՆԱ-ի կառուցվածքը (2014 թ. հաստատուն գներով, միլիոն ՀՀ դրամ)՝ ըստ ոլորտների (ձախից) և ավելի մանրամասն հայացք ծառայությունների ոլորտին (աջից): Ծանոթություն. ՀՆԱ-ի կառուցվածքը (NACE 2 դասակարգում) հաստատուն գներով, միլիոն ՀՀ դրամ: Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ (2016 թ. մարտի 15-ի դրությամբ):






WORLD BANK GROUP

**2010-2014 թթ. Հայաստանում գրանցվել է զբաղվածության ծավալների կտրուկ անկում՝ նաև պայմանավորված աշխատանքային տարիքի բնակչության թվի անկմամբ, որն էլ իր հերթին պայմանավորված է ժողովրդագրական վիճակի փոփոխությամբ և միգրացիայով: Բայց և այնպես ըստ զբաղվածության ոլորտների կատարված վերլուծությունը վկայում է, որ կառուցվածքային տրանսֆորմացիան հանգեցրել է էական տեղաշարժերի ոլորտների միջև:**




Ընդհանուր զբաղվածության կառուցվածքը՝ ըստ ոլորտների (ձախից) և ավելի մանրամասն հայացք ծառայությունների ոլորտին (աջից): Ծանոթություն. զբաղվածների ընդհանուր քանակը: Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ (2016 թ. մարտի 15-ի դրությամբ):



**2010-2014 թթ. ընթացքում տնտեսության բոլոր ճյուղերում նկատվել է աշխատավարձերի դրական տեղաշարժ: Բայց և այնպես (ծառայությունների ոլորտում) ճյուղերի միջև կան մեծ տարբերություններ, որոնք պայմանավորված են աշխատուժի արտադրողականության տարբերություններով: Ցածր արտադրողականություն գյուղատնտեսության ոլորտում:**







Ամսական աշխատավարձերը (կոնստանտ 2014, ՀՀ դրամ)՝ ըստ ոլորտների (ձախից) և ավելի մանրամասն հայացք ծառայությունների ոլորտին (աջից): Ծանոթություն. ամսական աշխատավարձերը՝ ՀՀ դրամով: Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ (2016 թ. մարտի 15-ի դրությամբ):

## Պատկերը՝ ըստ տարածքների: Զբաղվածության վերաբաշխումը՝ ըստ Երևանի, այլ քաղաքային և գյուղական բնակավայրերի: Այլ քաղաքային բնակավայրերում աշխատատեղերի ստեղծում՝ գյուղատնտեսությունից հրաժարվող անձանց համար աշխատանքի հնարավորություններ ապահովելու նպատակով:




Զբաղվածության ոլորտը 2010 և 2014 թթ.՝ ըստ բնակավայրերի (ձախից), աշխատանքային եկամտի փոփոխությունը տարեկան կտրվածքով (աջից): Ծանոթություն. զբաղվածության մակարդակը (յուրաքանչյուր սյունակի վերևում)՝ հաշվարկված 15-75 տարեկան աշխատանքային տարիքի բնակչության հաշվառմամբ: Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի աշխատակիցների հաշվարկները 2010 և 2014 թթ. Հայաստանի ՏՏԿԱՀ-ի հիման վրա:

*Որտե՞ղ կան աշխատատեղեր:* Գյուղատնտեսությունը կենտրոնացած է գյուղական բնակավայրերում, սպասարկման ոլորտի 85 տոկոսը՝ Երևանում: Գյուղատնտեսության և շինարարության ոլորտում զբաղվածության ծավալների նվազման պայմաններում այլ քաղաքներում միջանկյալ ոլորտը կարող էր ստեղծել լրացուցիչ զբաղվածության նոր հնարավորություններ: Այնուամենայնիվ նշանակություն ունի նաև աշխարհագրական շարժունությունը:

## Զբաղվածությունը՝ ըստ բնակավայրի, տնտեսության տարբեր ճյուղերի




Զբաղվածությունը՝ ըստ բնակավայրի, տնտեսության տարբեր ճյուղերի: Ծանոթություն. ընտրանքում ընդգրկված են միայն 15-75 տարեկան աշխատանքային տարիքի համակազմի ներկայացուցիչներ: Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի աշխատակիցների հաշվարկները 2014 թ. Հայաստանի ՏՏԿՈՒՀ-ի հիման վրա:

*Պատկերը՝ ըստ բաշխվածության:* Կառուցվածքային տրանսֆորմացիան գործում է նաև ի նպաստ աղքատների: Նպաստել է աղքատության կրճատմանը 2010-2014 թթ.: Սակայն ողջ բնակչության համեմատ՝ աղքատ բնակչության շրջանում նկատվում է աշխատանքային եկամուտների աճի ավելի դանդաղ տեմպ:

## Զբաղվածության ոլորտը աղքատ բնակչության համար (և զբաղվածության մակարդակը)՝ ըստ բնակավայրի




Զբաղվածության ոլորտն աղքատ բնակչության համար 2010 և 2014 թթ.՝ ըստ բնակավայրի (ձախից), աշխատանքային եկամտի տարեկան փոփոխությունը (աջից): Ծանոթություն. զբաղվածության մակարդակը (յուրաքանչյուր սյունակի վերևում)՝ հաշվարկված 15-75 տարեկան աշխատանքային տարիքի բնակչության հաշվառմամբ: Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի աշխատակիցների հաշվարկները 2010 և 2014 թթ. Հայաստանի ՏՏԿԱՀ-ի հիման վրա:

## Զբաղվածության պատկերը տնտեսության տարբեր ճյուղերում վկայում է, որ (1) զբաղվածության ոլորտում աղքատ և ոչ աղքատ ընտանիքների աշխատող անդամների միջև խոշոր խզում չկա, (2) եկամտային բոլոր քվինտիլներում նկատվել է տեղաշարժ զբաղվածության ոլորտում:




Զբաղվածության ոլորտը (աղքատներ և ոչ աղքատներ) 2010 և 2014 թթ.: Ծանոթություն. Սպառման ազգային ագրեգատ (2009-ին ընդունված մեթոդաբանության կիրառմամբ): Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի աշխատակիցների հաշվարկները 2010 և 2014 թթ. Հայաստանի ՏՏԿԱՀ-ի հիման վրա:

**Կարգավիճակը զբաղվածության ոլորտում:** Աղքատ բնակչությունն ավելի քիչ է ընդգրկված աշխատաշուկայում և ավելի քիչ ժամեր է աշխատում: Գործազրկության ավելի բարձր մակարդակ աղքատ տնային տնտեսությունների անդամների շրջանում և թերզբաղվածության ավելի բարձր մակարդակ գյուղերում:







Աղքատ և ոչ աղքատ տնային տնտեսությունների անդամների կարգավիճակը աշխատաշուկայում (ձախից) և աղքատ ու ոչ աղքատ տնային տնտեսությունների անդամների ստացած կրթությունը (աջից): Ծանոթություն. ընտրանքում ընդգրկված են միայն 15-75 տարեկան աշխատանքային տարիքի անձինք: Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի աշխատակիցների հաշվարկները Հայաստանի 2010 և 2014 թթ. ՏՏԿԱՀ-ի հիման վրա:

***Զբաղվածության ոլորտը:*** **Աղքատներն ավելի վատ են պաշտպանված, և նրանց հետ ավելի աննպաստ պայմանագրեր են կնքվում: Գրականության մեջ դա կապվում է զբաղվածության (և կյանքի պայմանների) խոցելիության հետ, ինչպես նաև ընդգծվում է ոչ ֆորմալ զբաղվածության և ցածր արտադրողականության կապը:**







Վիճակը զբաղվածության դաշտում (ձախից) և պայմանագրի տեսակը (աջ)՝ ըստ բնակավայրի և ընտանիքի աղքատության կարգավիճակի: Ծանոթություն. ընտրանքում ընդգրկված են միայն 15-75 տարեկան աշխատանքային տարիքի անձինք: Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի հաշվարկները Հայաստանի 2010 և 2014 թթ. ՏՏԿԱՀ-ի հիման վրա:

*Աշխատանքի արտադրողականություն:* Աղքատ խավի կրթական մակարդակն ավելի ցածր է, ինչը հանգեցնում է ավելի ցածր աշխատավարձերի: Ավելի բարձր կրթական մակարդակը հնարավորություն է տալիս ստանալու արտադրական օգուտներ, եթե աշխատաշուկայում պահանջարկը համապատասխանում է առաջարկին:




Առանձին հատկանիշներ, որոնք նվազեցնում կամ ավելացնում են աշխատանքից ստացվող եկամուտը (գյուղատնտեսությունից բացի) զբաղվածության մյուս ոլորտներում: Ծանոթություն. գծապատկերում բերված են Մինցերի՝ աշխատանքային եկամտի ռեգրեսիայով հաշվարկված գործակիցները, որտեղ կախյալ փոփոխականը աշխատանքային եկամտի լոգարիթմն է՝ վերցված 2014 թ. հաստատուն գներով, ՀՀ դրամով: Արդյունքները ստացվել են 2010-2014 թթ. ընթացքում կրկնված ներկայացուցչական ընտրանքից: Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի աշխատակիցների հաշվարկները 2014 թ. Հայաստանի ՏՏԿԱՀ-ի հիման վրա:

Փաստ 2

Միգրացիա

# Ներքին և արտաքին միգրացիան ընդլայնում է ներքին աշխատաշուկան

- Միգրացիայի հնարավորությունն ընդլայնում է ներքին աշխատաշուկան և լրացուցիչ եկամուտներ ապահովում դրամական փոխանցումներից:

- Ներքին և արտաքին միգրացիայի դերը՝ որպես բնակավայրերի տարբերությունները համահարթեցնող (աղքատությունն այլ քաղաքային բնակավայրերում):

- Կայունություն. կախվածությունը դրամական փոխանցումներից ևս բարձրացնում է խոցելիությունը արտաքին ցնցումների շղթայական տարածման միջոցով:

WORLD BANK GROUP

## Աշխատուժի շարժունությունը բնորոշ է փոքր բաց տնտեսություններին. եկամտային բոլոր քվինտիլներում. տնային տնտեսությունների 15.9 տոկոսը դրամական փոխանցումներ է ստանում միջազգային միգրացիայի արդյունքում, իսկ 3.5 տոկոսը՝ մասնավոր տրանսֆերտներ է ստանում երկրի ներսում:







Դրամական փոխանցումներ և մասնավոր տրանսֆերտներ ստացող տնային տնտեսությունների մասնաբաժինը՝ ըստ բնակավայրի (ձախից) և եկամտի կառուցվածքը՝ ըստ եկամտային քվինտիլի (հաստատուն, 2014 թ., ՀՀ դրամով՝ մեկ շնչի հաշվով, աջից)։ Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի աշխատակիցների հաշվարկները 2010 և 2014 թթ. ՏՏԿԱՀ-ի հիման վրա:



WORLD BANK GROUP

